

Բ Ժ Յ Կ Ա Կ Ա Ն

Բ Ժ Յ Կ Ա Կ Ա Ն

Պ Ե Տ Ր ՈՍ Ի Բ Ե Լ Ե Ն Թ Ե Ր Ե Ե Ն

Պարեւոր կը համարիմ մեր գրութեան նիւթընել այս անգամ սոյն Բժշկութեան, անցեալ դարուց մէջ մեր հնագոյն Բժշկարաններէն միակ եւ գրեթէ անդրանիկ տպագրեալը,¹ որ ազգային մատենագարանաց մի ամենահազուագիւտ հատորն է այսօր:

Իւսկիւտարու Ս. Խաչի գրատան 229 թուով մատենան է Բժշկարանս՝ զոր նուիրած է երջանկայիշատակն Կարապետ Պատրիարք. 136 էջերէ բաղկացեալ գեղեցիկ հատորիկ մըն է այն տպագրեալ ի նորն Նախիջևեան՝ յամի Տեառն 1793, Մարտի 15ին, թուականէս գրեթէ դար մը յառաջ:

Բժշկարանիս հեղինակն է Ջոն-Պայեյ՝ Պետրոս Քալանթարեան հայազգի բժիշկը՝ որ շարագրած է զայս տպագրութեան ժամանակէն 4 տարի յառաջ 1789 թուին:

Երկու մասերէ կը բաղկանայ բժշկարանս. առաջին մասն է բուն բժշկարանն, որ կը յանդի 84րորդ էջը: Երկրորդ մասը՝ Բժշկարանի Բառարանն է, որ 85երորդ էջէն սկսելով կը վերջանայ 134րորդ էջը:

Հատորին առաջին էջին վրայ կը կարգանք դործոյն վերնագիրը, հեղինակին անունն եւ մականունն, տպագրութեան վայրն ու թուականն հետեւեալ կերպով.

«ԲԺՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՐՈՑ»,

«Շարագրեալ ի ներհուն Բժիշկ Ջոն-Պայեյի Յօհաննէս Քալանթարեան Պարոն Պետրոսէ:

Յամի տեառն 1789ին:»

«Տպագրեալ ի Հայրապետութեան՝ Լուսանկար Մօրն մերոյ՝ Սրբոյ Գահոյն Էջմիածնի՝ Տեառն Ղալանթարեան Սրբազնասուրբ Կաթողիկոսի Եմենայն Հայոց:»

«Հրամանաւ Սրբոյ Եթովպոյն Էջմիածնի Ծայրագոյն Նուիրակի եւ Հիւսիսային կողմանս եղեալ ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի Սանահնեցոյ Երկայնաբազուկ Արղուութեանց՝ Իշխանազնեայ Տեառն Յովսէփայ Սրբազան Արք Եպիսկոպոսի, եւ Հիմնադրի Նոր Նախիջևեանու եւ Գրիգորուպօլու Քաղաքացն Հայոց:»

«Արդեամբք է Ժախէք է Հնդիք է Սորսի Բնակեալ Ջոն-Պայեյի Պայծառ Իշխան Առաջ Յօհաննէսի Գերբաբեան:»

«Սրբագրեալ զգուշութեամբ ի վերայ Հեղինակին ձեռագրոյ ի Թագդէոս Վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ Մարութեան:»

«Յամի Տեառն 1793. Մարտի 15ին:»

«Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեանն:

Ընդ հովանեաւ Երկնահանգէտ Սուրբ Խաչ Վանիցն, որ ի նորն Նախիջևեան:»

Երեսագրիս ընդդիմակողմը, հատորին երկրորդ էջին վրայ կը տեսնուի հեղինակին մի գեղեցիկ պատկերն՝ ի ստորեւ ունենալով. «Կենդանութիւն Պետրոս Բժիշկի Ջոն-Պայեյոյ որոյն Յովաննէսի Քալանթարեան, ծնեալ յամի Տեառն 1735», արձանագրութիւնը:

Կենդանագրին տիպարը կը փութամբ գետեղել աստանօր, շնորհիւ Իւսկիւտարու ճարտար նկարչին՝ Պ. Արշակ Սէտէֆձեանի, որ զայն բժշկարանին մէջէն լուսանկարած է մեծ խնամով:

Պետրոս Բժիշկի Քալանթարեան իւր աշխատութիւնը կը նուիրէ առ Մեծահամբաւ Յովսէփ Սրբազանն Արղութեանց հետեւեալ ուղերձիւ, որ բժշկարանիս երրորդ եւ չորրորդ էջերը կը գրաւէ ամբողջովին:

«Երեց Երանեալ Հօր Հասարակաց Իշխանանէս Տեառն Յովսէփայ Սրբազան Եւ Արդեամբ Ար Երեմիայոսի Իսնարհաբար Եւ Իրոսն:»

«Տեսեալ իմ, թէ՛ ի կառուցանել Բարձր Սրբազնութեանդ՝ զբարեառիթ Պայրոցն, եւ ի պայծառացուցանելն՝ զազգաօգուտ Տպարանն, (որ ի նորն Նախիջևեան.) բոլոր հայրենասէր ազգահայոց ի ծագաց երկրի՝ ի հեռաստան կողմանց՝ մինչ ցը ի Հնդկական նահանգաց, ինքնայօժար կամօք՝ եւ զուարթամիտ առատաձեռնութեամբ՝ նուիրամատոց գտանիլն՝ երջանկութիւն ինքեանց՝ եւ մեծ բարութիւն՝ բազմացրիւ ազին իւրեանց համարեցան. (որպէս եւ է իսկ:) Ուստի՛ եւ անքատս ի մեծագոյն գոյից՝ զգեղեցիկ նախանձն նախանձեալ, ըստ որում մասն եւ անգամ հայկասեռն ազնուասերունդ ազին, ի յօգուտ հասարակաց բարոյն՝ տուեալ զտկար անձն իմ յաշխատանս, զի որձառեցեալ զեղորայս՝ զանազան ցաւոց՝ պատահելոց մարդկային սեռի, փնջասարաս ի մի հաւաքմամբ՝ յառաջ ածի զայս փոքրիկ Բժշկարան, ընդ նմին եւ զհամառօտ Բառարանն նորին:»

¹ Ազգային Տպագրութեան առաջին խաչըն, յսկիզբն վեշտասաներորդ դարու, կը պարունակէ նաեւ Գաղանթարեանի Բժիշկարանի համառօտութիւնը. (Տե՛ս «Արեւիկ», ԹԷ՝ 1926 1890 մֆ. է՝ «Բաղնիկ», ԹԷ՝ Մարտ ամսոյ 1890 մֆ. Տե՛ս է՝ «Յուլի», Հ. Ղ. Ալեքանի, Հարտ Ե. էջ 521):